

ՅԻՍՈՒՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁԸ

Յիսուս նազովրեցիի հիմնած վարդապետութիւնը, պուտոյականութեան եւ իսլամութեան կողմէն, գրեթէ երկու հազար տարիներէ ի վեր իր ուրոյն տեղը գրաւած է աշխարհի կրօններու պատմութեան մէջ. սակայն, Պուտոյէն եւ Մուհամմէտէն աւելի Յիսուսի անձը դարձած է տիրական եւ ազդեցիկ դէմքը արեւմտեան քաղաքակրթութեան պատմութեան մէջ: Քսան դարերու ժամանակամիջոցին ուսումնասիրելով ժողովուրդներու մշակոյթը կը յանգնէին այն եզրակացութեան, որ անկախաբար կազմակերպեալ եկեղեցիէն եւ եկեղեցական աստուածաբանութենէն, Յիսուս կը պատկանի համայն մարդկութեան:

Աստուածաշունչի Նոր Կտակարանի հեղինակներ իրենց վկայութիւնները պատմագրած են Յիսուսի կեանքին ու քաղաքական մասին: Յիսուսի կեանքին պատմութեան վերծանումը դարերու տեւողութեան նիւթ դարձած է ուսումնասիր անձերու կողմէ եւ իւրաքանչիւր դարաշրջան յատուկ մօտեցումով ընկալած ու մեկնաբանած է զայն. հետեւաբար, Յիսուս Քրիստոսի մասին հազարաւոր հատորներ լոյս տեսած են այլեւայլ լեզուներով:

Քրիստոնէութեան հիմնադիրի եւ օրէնսդիրին մասին սակաւ են տեղեկութիւնները դասական սկզբնաղբիւրներու մէջ: Յիսուսի պատմութեան չենք հանդիպիր նաեւ Հռոմէական կայսրութեան արխիւներուն եւ տարեգրութեանց մէջ եւ ոչ ալ հրեական պատմագրութեանց մէջ. այս պատճառով կարգ մը քննադատներ հարցականի տակ առած են Յիսուսի պատմական գոյութիւնը. հետեւեալ քանի մը արտաքին վկայութիւնները կու գան ապացուցանել Ամոր անձնաւորութեան ստուգութիւնը:

Հռչականուն հռոմէացի Տակիտոս պատմաբանը իր տարեգրութեան մէջ շատ կարեւոր հատուած մը ունի ուր նկարագրած է Ներոն կայսեր (Յ.Ք. 64) հալածանքները ընդդէմ քրիստոնեաներու: Հռոմի մեծ հրդեհին առիթով Ներոն իր վրայէն փարատելու համար ժողովուրդին կասկածը, քրիստոնեաներուն վրայ նետելով յանցանքը սպաննել կու տայ զանոնք. պատմիչը կ'աւելցնէ. «Այս աղանդին հեղինակն է Քրիստոս, հրէաստանի մէջ ծնած, որ Տիրերի կայսրութեան ժամանակ մահուան դատապարտուեցաւ նահանգին կառավարիչ Պոնտացի Պիղատոսին ձեռամբ ...» (15,44):

«Այս քանկագին հատուածը, կը գրէ Սապաթէ, ո'չ միայն կը ծանօթացնէ մեզի քրիստոնէութեան ծնունդը հրէաստանի մէջ, անոր սկզբունքին հռոմէական քաղաքաստուածութեան հակառակ ըլլալը, մօտ 64 թուականին անոր անկախութիւնը հրէութեան նկատմամբ, այլեւ կը յայտնէ՝ թէ անոր հիմնադիրը, Քրիստոս, ապրած է Տիրեր կայսեր օրով եւ մահուան դատապարտուած է Պիղատոսի ձեռամբ, այսինքն 26-36 տարիներու մէջ, ինչ որ կը համաձայնի արդէն Յովհաննէս Մկրտիչի մահուան մասին Յովսեփոսի ցոյց տուած ժամանակին հետ» (Encycl. des sciences relig. art. J. Ch. Tom VII. P 350):

Կղոտիոս Կայսեր Կեանքը երկին մէջ, կայսերական կենսագիր Սուետոն կը պատմէ, թէ «Կղոտիոս Հռոմէն վոնտեց հրեաները, որոնք միշտ հանդարտ չէին կենար Գրէսդուս անուն անձի մը դրդումներուն անսալով» (25,4): Այս հատուածը կը մատնանշէ որ Կղոտիոսի ժամանակ հրեայ հաւատացեալներ քաղաքական աշխատանք տանելով Քրիստոսը կը ծանօթացնէին տեղացիներուն: Նկատելի է

որ պատմիչը Յիսուսը իբրեւ հրեայ խոռվարար ներկայացնելով, հրեայ ֆրիստոնեաները շփոթած է բուն հրեաներուն հետ:

Փոքր Ասիոյ կառավարիչ Պլինոս Կրտսեր կարեւոր նամակ մը յղած է Տրայանոս կայսեր ու տեղեկութիւն տուած ֆրիստոնեաներու «սնապաշտութեանց» մասին. ի միջի այլոց, ան գրած է, թէ «շաքքուան մէկ օրը անոնք կը հաւաքուին ու երգելով կը պատուեն ու կը փառաբանեն Քրիստոսը՝ իբրեւ աստուած» (10,96):

Ժամանակակից հրեայ պատմաբան Յովսէփոս Փլաւիոս կ'ըսէ. «Յիսուս անուն իմաստուն մարդ մը, եթէ զայն վայել է մարդ կոչել, որովհետեւ իր բոլոր գործերը զարմանալի էին, թէ՛ հրէից եւ թէ հեթանոսաց մէջէն շատ հետեւողներ ունեցաւ ... Ան մեռաւ խաչուելով, բայց երրորդ օրը կենդանի երեւցաւ իր աշակերտներուն» (Հրէից Հնախօսութիւնք ԺԸ Գ, 3):

Յիշեալ հատորին մէջ Յիսուսի մասին ակնարկութեան կը հանդիպինք, երբ հեղինակը կը նկարագրէ դատաւորութիւնն ու քարկոծումը «Յակոբոսի, եղբայրը Յիսուսի, որ կը կոչուի Քրիստոս» (Ի. Թ, 1): Յովսէփոսի վերագրուած այս յիշատակութիւնները շատ վէճերու պատճառ եղած են: Քրիստոնեայ գրիչէ մը վերջամուտ յաւելուած կը կարծուի:

Հրէական Թալմուտի մէջ ֆրիստոնէական աւանդութիւնը սխալ մեկնաբանուած է: Հոն, Յիսուս ներկայացուած է իբրեւ կախարդ ու ֆաղափական խոռվարար, որ «Իսրայէլը մոլորեցնելուն» համար, մահուան դատապարտուած է խաչելութեամբ. (Sanhedrin 43 a):

Դասական հեղինակներու վերոյիշեալ մէջբերումները կու գան փաստել այն իրողութիւնը որ նախնական շրջանին Յիսուսի պատմական անձին գոյութիւնը

երբեք կասկածի նիւթ չէ եղած նոյնիսկ ֆրիստոնէութեան հակառակորդներէն: Մարդիկ եթէ ֆննդատած կամ ուրացած են Յիսուսի աստուածութիւնը. բայց անոնք ընդունած են, թէ «Քրիստոս մարդ մըն էր կատարեալ եւ ապրած որոշ թուականի մը մէջ»:

«Քրիստոնէութիւնը հիմնուած է իր հիմնադրամին անհատական կեանքին վրայ (կը գրէ Գեորգ Սարկաւագ): Անոր առանցքը Քրիստոսն է եղած. ուրանալ Յիսուսի գոյութիւնը՝ ուրանալ պիտի ըլլար նաեւ ֆրիստոնէութեան գոյութիւնը: Յիսուսի պատմական անձ մը ըլլալը գրեւոր համար, պէտք է նախ ջնջել անոր հաստատած կրօնը եւ սկզբունքները: Առանց Յիսուսի պատմական կեանքին ու գործունէութեան, ֆրիստոնէութիւնն անհասկնալի պիտի մնար ... պատմական Քրիստոսին գոյութիւնը երկու հազար տարիներէ ի վեր պատմական ու կենդանի, իրական ու անյաղթելի անձնաւորութիւնն է» (Լոյս, 1906, էջ 956):

Նագովրեցի վարդապետին կեանքը եւ ուսուցումները տակաւին կը շարունակեն ներշնչել միլիոնաւոր կիներու եւ այրերու կեանքները, որոնք գործադրելով ֆրիստոնէական սկզբունքները, այս աշխարհի մէջ

դ իսկ կ'ապրին երանաւտ կեանքը:

Յիսուսի յարութեան հաւատքը, որ հիմնաքարն է ֆրիստոնէութեան, սերտօրէն առնչուած է Յիսուսի պատմական անձնաւորութեան:

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃՅԱՆ